

ԵՎ ՄԻ ԱՆԳԱՄ ԳԱՌՆԻԻ ՀՈՒՆԱՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ս. Մ. ԿՐԿՅԱՆՈՒՅԱՆ

Դժվար է դերագնահատել Գառնիի հունարեն արձանագրության նշանակությունը հին Հայաստանի մշակույթի (և ոչ միայն մշակույթի) պատմությունն ուսումնասիրելու գործում: Ուստի բոլորովին պատահական չէ, որ մի շարք անվանի հայագետներ և վիճաբաններ դրադվել են նրա ընթերցմամբ:

Մեր այս հաղորդման համեմատ նպատակն է տալ Գառնիի արձանագրության սոսկ մի քանի վիճելի բառերի նոր ընթերցում և մեկնաբանում այն հույսով, որ դրանք կարող են օգտակար հանդիսանալ հետագա ուսումնասիրողների համար:

Այդ արձանագրության շուրջ հրատարակված բոլոր ուսումնասիրությունները, անկասկած, իրենց խոշոր կամ փոքր սխալներով հանդերձ, ունեն որոշակի արժանիքներ և բոլոր դեպքերում մի քայլ առաջ են մղել արձանագրության վերծանման աշխատանքները: Մեզ թվում է, սակայն, որ առավել հաջող և ամբողջական է Կ. Վ. Տրեվերի ընթերցումը, որն էլ, մեր կարծիքով, այսուհետև պետք է հիմք ծառայի Գառնիի արձանագրության հետագա ուսումնասիրման ժամանակ:

Արձանագրությունն սկսվում է թագավորի տիտղոսով, որի առաջին բառը պահպանվել է անփնաս, իսկ երկրորդը՝ վերևից վնասված լինելով հանդերձ, կարդացվում է առանց մեծ դժվարության: Ուստի բոլոր հրատարակիչները ճիշտ կերպով այն կարդացել են՝ *Ἡλίου Τιτάτου*: Սակայն, ճիշտ ընթերցելով հանդերձ, նրանք, մեղ թվում է, չեն կարողացել ճիշտ մեկնաբանել *Ἡλίου* բառը: Պրոֆ. Ստ. Լիսիցյանն այն թարգմանել է պարզապես «արև»:¹ Ակադ. Ն. Մանանդյանն իր առաջին ընթերցման ժամանակ այն թարգմանել է որպես հռոմեական հատուկ անուն՝ *Ἰλιου* (*Aelius*)², իսկ երկրորդ ընթերցման ժամանակ այն համարել է հայկական Տիրան անվան հունարեն թարգմանությունը³: Պրոֆ. Ա. Արրահամյանն այն թարգմանել է որպես թագավորի անվան ածական՝ «արեղակնափայլ»:⁴ Կ. Վ. Տրեվերը այն համարում է ուղղակի արձանագրության սկզբում գրված աստծու հիշատակում⁵, իսկ Գ. Սարգսյանը՝ *Ἡλίου*-ի հիշատակումը ննարավոր է համարում գլապել թագավորի և դինաստիայի այն պաշտամունքի հետ, որն ընդունված էր հին հայաստանում հաջևան հելլենիստական երկրների օրինակով⁶:

Մեր նախորդ աշխատություններից մեկում մենք համադրել էինք Արմավիրի № 4 հունարեն արձանագրության մեջ (երկրորդ քարի առաջին արձանագրությունը) հիշատակված *Μήδης* անունը Գառնիի արձանագրության *Ἡλίου* անվան հետ⁷: Արևելքում Միթրաս անվան տակ պաշտված աստվածությունը նույնացվում է Ապոլոն-Արևի հետ (*Ἡλίου* նշանակում է «արև»): Օրինակ, Կոմագենի Անտիոքոս թագավորի Նեմրուք-ոսրի հայտնի հուշարձանում

¹ «Սովետական հայաստան» թերթ, 23 սեպտեմբերի, 1945:

² Մանանդյան, Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը, Երևան, 1946, էջ 3:

³ Я. А. Манандян, Новые заметки о греческой надписи и языческом храме Гарни, ЗОШГФД «Տեղեկագիր», 1951, № 4, էջ 13:

⁴ Ա. Արրահամյան, Գառնիի հունարեն արձանագրությունը, «Էջմիածին», 1947, մարտ-ապրիլ, էջ 67-68:

⁵ К. В. Тревер, Очерки по истории культуры древней Армении, М.-Л. 1953, էջ 203:

⁶ Գ. Սարգսյան, Գառնիի հունարեն արձանագրության շուրջը, ЗОШГФД «Տեղեկագիր», 1956, № 3, էջ 48, ծան. 2:

⁷ Ս. Մ. Կրկյաշարյան, Դիստոնություններ հին հայկական տաճարային քաղաքների առաջացման մասին, ЗОШГФД «Տեղեկագիր», 1963, № 9, էջ 57-59:

միեկնույն աստվածություններ կոչված է 'Απόλλων Μιθράς 'Ηλίου Έρμης⁸։ Մյուս կողմից, հայկական Տիր աստվածը (այստեղից էլ Տրդատ անունը) նմանապես նույնացվում է Ապոլոնի հետ։ Ստ. Լիսիցյանը, Ա. Արրահամյանը, Կ. Վ. Տրեվերը, Բ. Առաքելյանը և Գ. Սարգսյանը իրավամբ գտնում են, որ արձանագրության մեջ խոսքը վերաբերում է Տրդատ Ա-ին։ Այսպիսի ելակետը հետաքննում է 'Ηλίου բառի բացատրությունը։ Ինչպես ասվեց, Հ. Մանանդյանը 'Ηλίου բառը համարեց Տիրան անվան հունարեն թարգմանությունը։ Այս հետաքրքիր եզրակացությունն անելով, մեծապատակ գիտնականը հարցը լուծված է համարում։ Կարծում ենք, սակայն, որ նրա այս ենթադրությունը կարող է հիմք ծառայել, Արմավիրի արձանագրության օգնությամբ, 'Ηλίου բառի առեղծվածը լուծելու։ Արմավիրի արձանագրության մեջ քրմապետ-թագավորը կոչված է Μιθράς, այն է՝ արևի աստվածության անունով, իսկ Գառնիի արձանագրության մեջ Տրդատ թագավորը, որը, ինչպես հայտնի է Տակիտոսի վկայությունից, միաժամանակ քուրմ էր⁹, կոչված է 'Ηλίου Τιριδάτης։ Մնում է ենթադրել, որ 'Ηλίου դա նրա տիտղոսն է կամ հավելյալ անունը իրրե քրմի, իսկ Τιριδάτης նրա անունը իրրե թագավորի։

'Ηλίου Τιριδάτης բառերին հաջորդում է Տրդատի պաշտոնական տիտղոսը, որի սկիզբը, սակայն, աեղագրված լինելով առաջին տողի վերջում, լրիվ ծաղկված է։ Ուսումնասիրողներն այստեղ վերականգնում են օ ԱΞΥΤ- «մեծ» բառը, հենվելով Ապարանի հունարեն արձանագրության վրա, որտեղ կարդում ենք Τιριδάτης օ μεγας Μεγάλης 'Αρμενίας βασιλευς¹⁰։

Հ. Մանանդյանն իր առաջին ընթերցման ժամանակ այստեղ ենթադրել էր βασιλευς բառը, բայց իր երկրորդ ընթերցման ժամանակ անհարկի հրաժարվեց իր այս ենթադրությունից և ընդունեց ուրիշների առաջարկած օ μεγας բառը։ Մեր կարծիքով ավելի ճիշտ է Գ. Սարգսյանի ենթադրությունը, որը արձանագրության չպահանջված այս մասը լրացնում է 3350. բառով¹¹։ Այս կասկածնությունը Բ. Սարգսյանի արտահայտած ընդհանուր առմամբ ճիշտ նկատառումներին մենք կուզենայինք ավելացնել հետևյալը։ Այդ ժամանակահատվածի պատմությունից մեզ հայտնի չէ և ոչ մի դեպք, ոչ մի արձանագրություն, որտեղ թագավորն իրեն անվանի «մեծ» և այն զրոյձի իր թողած արձանագրության վրա։

Արձանագրության երկրորդ տողի առաջին բառերը՝ Μιθράς — 'Αρμενίας — «Մեծ Հայրի» կարգացվում են ավելի քան պարզ կերպով։ Այնուհետև դալիս է 3351. կիսատ բառը, որի վերջը ծաղկված է։ Ստ. Լիսիցյանի լրացումը (3351.ω) թյուրիմացություն է։ Հ. Մանանդյանն այն կարդում է 3353.ω — «թագավորելով», Ա. Արրահամյանը՝ 3353.ω, որը չի կարելի ընդունել, իսկ Կ. Վ. Տրեվերը 3353.ω¹²։ Մենք ընդունում ենք Հ. Մանանդյանի ընթերցումը։

Օրրորդ տողը կարգացվում է օς θεσποτης αἰχτισε-ν (պետք է լինի εἰχτισε-ν)։ Հետագոտողների մոտ վեճի առարկա է այս տողի վերջում կիսատ պահանջված բառի լրացումը։ Հունարենում անցյալ կատարյալի եզակի երրորդ դեմքի վերջավորությունն է -σε՝ եթե հաջորդ բառն սկսվում է բաղաձայնով, իսկ ձայնավորով սկսվելու դեպքում վերջավորությունը լինում է -σεν։ Հետևաբար αἰχτισε-ν բայի վերջին ν տառը կարող է պատկանել նաև հետևյալ բառին։ Այս հանգամանքը նկատի առնելով, Ստ. Լիսիցյանը շարունակության մեջ կարգացել է 3354.ν, Հ. Մանանդյանը՝ 3353.ω, Ա. Արրահամյանը՝ 3353.ω, Կ. Վ. Տրեվերը՝ 3353.ω, Գ. Սարգսյանը՝ 'Αγχι, կամ Αδία կամ որևէ մի հատուկ անուն։ Ինչպես տեսնում ենք, բացառությամբ Գ. Սարգսյանի, բոլորը, իրենց տարրնթերցանություններում հանդերձ, համաձայն են, որ վեճի առարկա բառը պետք է լինի ուղիղ խնդիր, որը վերաբերում է 3353. — «կառուցեց» բային։ Սակայն միանգամայն իրավացի է Գ. Սարգսյանը, երբ գրում է. «Ելնելով նախադասության շարահյուսական կառուցվածքից, այստեղ ուղիղ խնդիր չի կարելի տեսնել։ Այդպիսինը... դանվում է հետևյալ տողում»¹²։ Գ. Սարգսյանը «իշտ կերպով այստեղ ենթադրում է տրական հոլովով զրված բառ։ Չբացատրելով, սակայն,

⁸ S. K. Humann und O. Pichstein, Reise in Kleinasien und Nordsyrien, Textband, Berlin, 1890, էջ 273 և 321։ Մ. Խորենացու մոտ ևս համապատասխան կերպով հանդիպում է երեք դույզ աստվածություն՝ Արեգակ-Լուսին, Ապոլոն-Արտեմիս, Տիր-Անահիտ (տե՛ս Մ. Խորենացի, Բ, ր, Բ, ժա, Բ, խթ և այլն)։

⁹ Tacit., Annales, XV, 24.

¹⁰ М. И. Ростовцев, Анаранская греческая надпись царя Тиридата, СПб., 1911.

¹¹ Գ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 47։

¹² Գ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 50։

Նրա այն ենթադրությունը, թե այդ բառը կարող է եղած լինել թաղուհու անունը, մենք հակված ենք այնպիսի անունի տրական հոլովով դրված ածական: Վե՛րի առարկա բառից պահպանվել են առաջին երկու առոժը ԱԼ կամ ԱԴ: Այդ բառը մենք առաջարկում ենք չրացնել «γλαυ αἰσιν» «պայծառափայլ» կամ (թիշ հավանական) «γλαυτίζ» «թրեթի» ածականով: Մեղիդ ինդիրը, ինչպես նշել է Փ. Սարգսյանը¹³, դանվում է արձանագրության 4-րդ տողի վերջում, որտեղ չառ... բառը կարելի է կարգալ չառ-թոն: Այսպիսով, ունենում ենք αἰσιν, αἰσιν (կամ γλαυτίζ) βραχύνει τον τινάχου χαν-թոն — «կառուցեց պայծառափայլ (կամ սիրելի) թաղուհու համար անհաղթելի ամրոցը»:

Մեր հաջորդ դիտողությունը վերաբերում է արձանագրության 7-րդ տողի λειτουργος բառին: Անկասկած, արձանագրության առաջին հրատարակողները (Ս. Լիսիցյան, Ն. Մանդյան, Ա. Արրահամյան) այն ճիշտ չեն ժեկնարանել:

Λειτουργός (ափելի ճիշտ՝ λειτουργός, սրանից էլ λειτουργία) հունարեն բառը կաղմված է λειω (ժողովուրդ) և εργον (գործ) բառերից: Λειτουργός կոչվում էր այն անձնավորությունը, որը կատարում էր որե՛կ λειτουργία: Այս տերմինը արտահայտում է այն ծառայությունը (ռազմական նավերի շինություն, թատերախմբի ղոտացիա, շինարարական աշխատանքներ, հարկերի գանձում և այլն), որը անտիկ աշխարհում այս կամ այն պոլիսում իր իսկ միջոցներով կատարում էր որե՛կ ունեւոր քաղաքացի, քաղաքային համայնքի կամ պետության օգտին: Այս առումով պիտի ճիշտ համարել Կ. Լ. Տրեվերի և Փ. Սարգսյանի տեսակետը, որոնք արձանագրության λειτουργος բառը համարում են արտահայտություն այն բանի, որ հելլենիստական Հայաստան մուտք էր գործել լիաբերդիայի ինստիտուտը:

Այսուհանդերձ լիտուրգիայի ինստիտուտը ժամանակի ընթացքում ենթարկվել է որոշ փոփոխությունների: Եթե Հունաստանի պատմության կլասիկ ժամանակաշրջանում, երբ պետական կաղմակերպության հիմնական ձևը պոլիսն էր (քաղաք-պետություն), լիտուրգիայի պարտականությունները համայնքի կողմից դրվում էին այս կամ այն հարուստ քաղաքացու վրա, որի նյութական միջոցները հնարավորություն էին տալիս նրան կատարելու իր վրա գրված պարտականությունները, ապա հաջորդ շրջանում, երբ պետական կաղմակերպության հիմնական ձևը հելլենիստական միապետությունն էր, արդեն թագավորն ինքը այս կամ այն ծառայությունը, լիտուրգիան հանձնարարում էր այս կամ այն մարդուն (այսպես են հասկացել «Հունարեն մեծ բառարանի» հրատարակիչները՝ Պոլիբիոսի (III, 93, 4) οἱ εἰς τὴν λειτουργίαν ἀπεσταλμένοι հատվածում լիտուրգիա բառը, այն թարգմանելով «ծառայություն, դերասանություն, հանրային գործերի վերահսկողություն, որը կատարվում է մեկ ուրիշի հանձնարարությամբ»)¹⁴:

Լիտուրգիայի ինստիտուտի Հայաստան մուտք գործելու առաջին փաստը կարելի է տեսնել Պլուտարքոսի հետաքրքիր մի հաղորդման մեջ: Նկարագրելով Տիգրան Բ-ի ժամանակ Տիգրանականերտի կառուցումը, նա գրում է, որ «ինչպես քաղաքի հասարակ մարդիկ, այնպես էլ իշխանավորները թագավորին հաճոյանալու նպատակով իրար հետ մրցում էին քաղաքի կառուցման և ընդարձակման համար»¹⁵: Հայաստանում լիտուրգիայի ինստիտուտի հետագա արմատավորման փաստ չի՝ կարելի արդյոք համարել Գառնիի բաղնիքի խճանկար հատակի կենտրոնական մակադրությունը, որտեղ ասված է. Μένειν λειτουργος τριταχαια — «Ոչինչ չստանալով աշխատեցինք»¹⁶:

Լիտուրգիան, մուտք գործելով Հայաստան, անկասկած, տեղական պայմանների, ինչպես նաև տեղական համանման ինստիտուտների ազդեցության հետևանքով, ստացել է տեղական բնույթ, որն արտահայտվում էր թագավորին ծառայելու եղանակով: Հետևաբար, լիտուրգիան հայ իրականության մեջ կարող էր ստանալ թագավորի հանձնարարությամբ հոգուտ պետությունը կատարող ծառայության բնույթ: Մեր աղբյուրներում բաղմաթիվ վկայություններ կան այն մասին, որ հայոց թագավորը ազնվականության այս կամ այն ներկայացուցչին հանձնարարում էր այս կամ այն ծառայությունը, որը կոչվում էր «գործակալություն», իսկ պաշտոն ստացողը՝ «գործակալ»¹⁷: Պարզ է, որ հունարեն λειτουργος տերմինի բովանդակությունն այս դեպքում հա-

¹³ Նույն տեղում, էջ 49—51:

¹⁴ Μέγα λείκον τής «Ελληνιστῶν γλωσσῆς, εκδ. Διευκρινιστῶν. Ἀθῆναι, 1951, հատոր 5, էջ 4288, տես λειτουργία 2:

¹⁵ Plut., Lucull., XXVI: Փ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 36:

¹⁶ В. Аракелян, Гарни II, 1957, էջ 30:

¹⁷ Փափստոս Բուզանդ, Փ, ԺԴ: Մովսես Խորենացի, Փ, ԿԵ:

մրնկնում է հայերեն «գործակալ» տերմինի բովանդակությանը։ Ուստի և մենք հակված ենք Գառնիի արձանագրության *Λειτουργός* բառի տակ տեսնել հայոց թագավորի, տվյալ դեպքում՝ Տրդատի մոտ ծառայության մեջ գտնվող որևէ «գործակալի»։

Մեզ համար գերես պարզ չէ վերջին տողի ջարդված մասի, ինչպես նաև այն բառերի հարցը (*Μενετζ, μετζ μετζ τοῦ αυτοκρατοῦ*)։ Որոնք Կ. Վ. Տրեվերը և Գ. Սարգսյանը ենթադրում են հետադայի հավելում։ Ուստի և դրանց վերաբերյալ տրված մեկնությունները բավարար չհամարելով հանդերձ, առայժմ նոր ոչինչ առաջարկել չենք կարող։

Մեր հոդվածն արդեն մամուլի տակ էր, երբ հնարավորություն ունեցանք «Բազմավեպ» հանդեսի 1964 թ. № 4—6-ում ծանոթանալու Թ. Խ. Հակոբյանի «Ուրվագծեր Հայաստանի պատմական աշխարհագրության» դրքի մասին Հ. Քյուրտյանի գրախոսականին, որտեղ գրախոսողը ի միջի ույլոց անդրադառնալով հելլենիստական քաղաքներից Տիգրան II-ի Հայաստան բերած զաղթականությանը, նշում է, որ այն կազմված էր այլևայլ արհեստավորների խմբերից։ «Գոնե խճանկարողներու գոյության մասին, — շարունակում է նա, — տվյալ ունինք Գառնիի մեջ գտնված բազնիքին խճանկար հատակը, որուն արհեստավորները որոշ է, որ հույներ ըլլալու էին, որոնք հանդգներ են հունարեն խճադել նկարին մեջ՝ թե ի՞նչ անոքի են (ընդգծումը մերն է — Ս. Կ.)։ Ասիկա ցույց կուտա, որ վարձատրված, ազատ արհեստավորներ չէին այս վարպետները, այլ ստրուկներ... Դարձյալ ցույց կուտա, որ հունարենը նույնիսկ հայ ավազանիին հասկցած լեզուն չէր» («Բազմավեպ», 1964, № 4—6, էջ 172)։

Գառնիի խճանկար հատակի արձանագրության բովանդակությունը, որը մենք բառացի մեռ ենք բերել վերևում, ընդհանուր ոչինչ չունի վերորերյալ հատվածում ընդգծված բառերի հետ։ Այնուհետև, զժվար է ենթադրել, որ «հունարենը նույնիսկ հայ ավազանիին հասկցած լեզուն չէր», բանի որ Պլուտարքոսի հայտնի վկայությունները Արտավազդ թագավորի գրած հունարեն երկերի, ինչպես նաև Արտաշատի արքունիքում բեմադրված «Բաքոսուհիներին» մասին մեզ թույլ են տալիս պնդելու հակառակը։